Փաստեր Medicare-ի Նոր Նպաստների Վերաբերյալ

2003թ. MEDICARE-Ի ԴԵՂԱԳՐԵՐՈՎ ԴԵՂԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՒ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ՕՐԵՆՔԸ

MEDICARE-ը 65 և 65-ից բարձր տարիքի անկարողունակ մարդկանց համար էական նշանակություն ունեցող առողջապահական խնամքի ծրագիր է:

Վերջերս, նախագահ Բուշը և Կոնգրեսը համատեղ աշխատել են այնպիսի մի նոր օրենք սահմանելու ուղղությամբ, որը Medicare ունեցող մարդկանց առողջապահական ծառայություններից օգտվելու ավելի շատ հնարավորություններ կընձեռի, ինչպես նաև, առողջապահական ավելի շատ նպաստներ կտրամադրի նրանց:

Այս նոր օրենքը պահպանում և ուժեղացնում է ներկայումս գործող Medicare ծրագիրը, ավելացնում է նոր կարևոր դեղագրերի և կանխարգելիչ միջոցների նպաստները, ինչպես նաև լրացուցիչ օգնություն է տրամադրում ցածր եկամուտ ունեցող մարդկանց: Դու կարող ես քեզ համար բժիշկ, հիվանդանոց կամ դեղատուն ընտրել:

Եթե դու գոհ ես քո Medicare-ից, ապա կարող ես այն նույնությամբ պահպանել կամ կարող ես գրանցվել ներքոշարադրյալ տարբերակների մեջ. անկախ այն բանից, թե դու ինչ որոշում կկայացնես, դու ընդգրկված ես Medicare ծրագրի մեջ:

ԴԵՂԵՐԻ ԶԵՂՉԵՐԸ ՔԱՐՏԵՐԸ ԿՍԿՍԵՆ 2004 ԹՎԱԿԱՆԻՆ

Medicare-ի կողմից հաստատված դեղամիջոցի զեղչի քարտերը կկիրառվեն 2004թ, որը քեզ կօգնի դրամ խնայել դեղագրեր պատվիրելիս: Medicare-ը պայմանագիր կկնքի մասնավոր ընկերությունների հետ նոր զեղչ քարտեր առաջարկելու վերաբերյալ, մինչև 2006թ. կսկսվեն կիրառվել Medicare-ի դեղագրի նպաստները: Medicare-ի վավերացնող կնիքը կրող զեղչ քարտը քեզ հնարավորություն կտա դրամ խնայել 10-25%-ով:

Դու կարող ես ցուցակագրվել 2004թ. վաղ մայիս ամսից մինչև 2005թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում: Ցուցակագրվելը կատարվում է քո ընտրությամբ: Medicare-ը շուտով քեզ ցուցակագրվելու մասին մանրամասն տեղեկատվություն կուղարկի:

Ծայրահեղ կարիքավոր մարդկանց նրանց հասանելիք ամենաշատ օգնությունը կտրամադրվի: Եթե 2003թ. քո ստացած եկամուտը չի գերազանցում $12,123-ը մեկ անձի համար, կամ $16,362-ը ամուսնացած զույգի համար, դու կարող ես զեղչ քարտի վրա $600 քրեդիթ ստանալու պայմանունակ համարվելու դեպքում, որը քեզ կօգնի վճարել քո դեղագրերի համար: (Դու պայմանունակ չես համարվի $600 քրեդիթի համար, եթե արդեն դեղամիջոցի ապահովություն ես ստանում Medicaid-ից, Tricare for Life-ից կամ աշխատատեղից խմբով ապահովագրությունից):

2004թ. Medicare Advantage-ում նոր է նաև Medicare+Choice ծրագրերի անվանումը: Medicare Advantage-ի կանոններն ու վճարները բարելավվում են, որպեսզի քեզ առողջապահության ծրագրերի ավելի շատ հնարավորություններ ընձեռեն, ինչպես նաև ավելի լավ նպաստներ տրամադրեն: Առողջապահության ծրագրերի ընտրությունները հնարավոր է, որ արդեն իսկ բարելավված լինեն քո տարածաշրջանում: Այդ մասին ավելին տեղեկանալու համար հեռաձայնիր **1-800-MEDICARE** (1-800-633-4227):

ՆՈՐ ԵՒ ԲԱՐԵԼԱՎՎԱԾ ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ՆՊԱՍՏՆԵՐԸ ԿՍԿՍԵՆ 2005թ.

Կանխարգելիչ նոր նպաստները կծածկվեն, ներառյալ են.-

- Մեկ անգամյա նախնական բարեկեցության ֆիզիկական քննություն Medicare-ի Part B-ի մեջ ցուցակագրվելու օրվանից սկսած 6 ամսվա ընթացքում:
- Սրտանոթային (սիրտ) հիվանդությունները վաղ հայտնագործելու նպատակով զգնում՝ (screening) արյան քննությունների:
- Շաքարախտ (դիաբեթի) բացահայտող քննությունների կատարում Medicare ունեցող այն մարդկանց համար, որոնք դիաբեթի վտանգի տակ են գտնվում:

Այս բոլոր նպաստներն ավելանում են Medicare-ի արդեն իսկ տրամադրած բազմաթիվ կանխարգելիչ այնպիսի ծառայություններին, ինչպես օրինակ, քաղցկեղի զննում-ը, ոսկրային կուտակումի չափերը և պատվաստումները:



ԴԵՂԱԳՐՈՎ ԴԵՂԵՐԻ ՊԼԱՆԸ ԼՍԿՍԵՆ 2006թ.

Դեղագրով Դեղերի նպաստները կավելանան Medicare-ին 2006թ-ին: Medicare ունեցող բոլոր մարդիկ կարող են ցուցակագրվել այն ծրագրերի մեջ, որոնք վճարում են դեղագրերի համար: Պլանները կարող են տարբերվել, սակայն, ընդհանուր առմամբ, դրանք կիրականացվեն հետևյալ հիմունքներով.

- Դու կարող ես ինքդ դեղագրային ծրագիր ընտրել և ամսեկան մոտ $35 ապահովագին վճարել:
- Դու կվճարես առաջին $250-ը, (որը կոչվում է "հանուրդ"):
- Medicare-ն այնուհետև կվճարի $250-ից մինչև $2250 դեղամիջոցների վրա ծախսվող գումարի 75%-ը: Դու կվճարես այդ ծախսերի միայն 25%-ը:
- Դու կվճարես $2250-ից բարձր դեղամիջոցի ծախսերի 100%-ը, մինչև որ գերազանցես $3600-ի գրպանից դուրս կատարվող ծախսը:
- Medicare-ը կվճարի քո ծախսերի 95%-ը, եթե դու արդեն գերազանցել ես $3600-ը:

Որոշ դեղագրային ծրագրեր կարող են այլ տարբերակներ առաջարկել, որոնք քեզ կօգնեն գրպանից դուրս ծախսերդ փակել:

Լրացուցիչ օգնություն կտրամադրվի ցածր եկամուտ և սահմանափակ միջոցներ ունեցող մարդկանց: Ամենայն հավանականությամբ, Medicare ունեցող ծայրահեղ կարիքավոր մարդիկ, որոնց եկամուտը սահմանվածից ցածր է, չեն վճարի դեղագրերի ապահովագներն ու հանուրդները: Եկամտի չափերը կսահմանվեն 2005թ: Եթե դու պայմանունակ համարվես, ապա դու կվճարես միայն մի փոքրիկ գումար (co-payment) քեզ անհրաժեշտ յուրաքանչյուր դեղագրի համար:

Ուրիշները, որոնք նույնպես ցածր եկամուտ և սահմանափակ միջոցներ ունեն, կարող են օգնություն ստանալ՝ ապահովագներն ու հանուրդները վճարելով: Յուրաքանչյուր դեղագրի համար նրանց վճարելիք գումարը սահմանափակ է:

Medicare Advantage ծրագրի ընտրության հնարավորությունները կընդարձակվեն՝ ընդգրկելու տարածքային PPO-ները: Տարածքային PPO-ները կօգնեն հավաստիացնել, որ Medicare ունեցող բոլոր մարդիկ Medicare-ի առողջապահության այլընտրանք ունեն, անկախ նրանց բնակության վայրից: PPO-ները կարող են քեզ օգնել դրամ խնայել՝ քեզ համար բժիշկներ կամ առողջապահական ծառայություններ ընտրել տվյալ ծրագրի "preferred" ցուցակից, որի համար սովորաբար քեզանից հանձնարարական (կամ միջնորդ (referral) չի պահանջվում: Այսօր PPO-ները աշխատող ամերիկացիների համար ամենատարածված և հայտնի ծրագրերից են:

ԼՈՒՐԵՐ ԲՈԼՈՐ ԱՄԵՐԻԿԱՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ:

Այսօրվանից սկսած, ամերիկացիները կարող են ամեն տարի դրամ հավաքել, հարկումից ազատ, Առողջության խնայողության իրենց հաշվի մեջ: Առողջության խնայողության հաշիվները կարող են օգտագործվել բժշկական ծախսերը փակելու համար, իսկ չծախսված դրամը կմնա հաշվի մեջ, որի վրա չհարկվող տոկոս (շահույթ) ավելանա, ճիշտ այնպես, ինչպես Անհատական թոշակառության հաշիվը (IRA): Քո առողջական ապահովագրության հանուրդը պետք է լինի առնվազն $1000 մեկ անձի համար, և առնվազն $2000 ընտանիքի համար:

MEDICARE-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՐՑԵՐ ՈՒՆԵՔ:

Medicare-ի վերաբերյալ վերջին տեղեկություններին ծանոթանալու համար այցելեք **www.medicare.gov** կամ հեռաձայնեք **1-800-MEDICARE** (1-800-633-4227): TTY գործածողները կարող են հեռաձայնել 1-877-486-2048:

CMS
CENTERS for MEDICARE & MEDICAID SERVICES

Publication No.
CMS-11054-Armenian
January 2004